



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Ժակլին Այանյանի, Ծաղիկ Այանյանի և Կարինե Այանյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
Ժակլին Այանյանը, Ծաղիկ Այանյանը և Կարինե Այանյանը 14.07.2016թ. դիմել են ՀՀ
սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ վարչական դատավարության օրենս-
գրքի 158 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության (փոփո-
խություններով 06.12.2015 թ.) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ և ՀՀ Սահմանադրության
(փոփոխություններով 27.11.2005 թ.) 92-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

Դիմողները գտնում են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունումը, ըստ օրենսգրքի ընդունման վերաբերյալ «հիմնավորում» անվանումով փաստաթղթի, նպատակ է հետապնդել առավել ամբողջական և համապարփակ ձևով կարգավորելու վարչական դատավարության ընթացքում ծագող իրավահարաբերությունները, ինչպես նաև վարչական դատարանին ձերբազատելու բավականին մեծ ծավալի մեխանիկական բնույթի աշխատանքից, ինչը պետք է նպաստեր մնացած վարույթներում դատավարության արդյունավետության էական բարձրացմանը, սակայն, ըստ դիմողների, վիճարկվող դրույթում առկա՝ «կատարելով համեմատական վերլուծություն» արտահայտությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, ինչն առիթ է ստեղծում իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների՝ հանգեցնելով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Դիմողները, համեմատելով տարբեր դատավարական օրենսգրքերում առկա համանման կարգավորումները և վերլուծելով դրանց ընդունման հիմնավորումները՝ եզրահանգում են, որ օրենսդիրը բողոքարկվող դատական ակտում և վճռաբեկ դատարանի որոշումներում որևէ իրավանորմի վերաբերյալ հակասության և համեմատական վերլուծություն կատարելու հիմքում դրել է ինչպես իրավական որոշակիությունը, այնպես էլ վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու հանգամանքը:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերաբերյալ գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողներն իրավասու են դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Ժակլին Այանյանի, Ծաղիկ Այանյանի և Կարինե Այանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հուլիսի 2016 թվականի

ՍԴԴԿՈ/2-23